**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունվարի 14-ին կնքված N ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/01-2 պայմանագրում 2019 թվականի փետրվարի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝
Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝
Պայմանագրի 4.2 ենթակետում «մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինվել են «մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը» բառերով, Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ից հանվել են «ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը» բառերը, Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝
Պայմանագրի 7.5, 7.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**